ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 28.03.2019թ. հ.01/63Մ գրության՝ տեղեկացվում է.

Աջափնյակ վարչական շրջանի և Թերլեմեզյան փողոցների միջանկյալ տարածքում՝ Թերլեմեզյան փողոցի հ.21 «ՊԼԱԳԱ» ՍՊԸ (կառուցապատող) կողմից կառուցվել է 2 նկուղային և 15 վերգետնյա հարկերով բազմաբնակարան բնակելի շենք: Շենքի նախագծման և կառուցման համար հիմք են հանդիսացել 08.06.2007թ. տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն), 12.02.2008թ. համաձայնեցված, 06.08.2013թ. վերահամաձայնեցված նախագծերը և 21.04.2008թ. տրամադրված հ.02/18-Մ-1407-590 շինարարության թույլտվությունը, որի ժամկետը տարբեր ժամանակահատվածներում երկարաձգվել է երկարացման պահի դրությամբ չիրականացված աշխատանքների հաշվարկով: Հիմնական աշխատանքները ներկա դրությամբ ավարտված են, իրականացվում են ներքին հարդարման և որոշակի ինժեներական ներքին ցանցերի մոնտաժման աշխատանքներ: Երևանի քաղաքապետի կողմից 12.02.2008թ. համաձայնեցված և 06.08.2013թ. վերահամաձայնեցված նախագծերով դեպի քննարկվող բազմաբնակարան բնակելի շենքի մուտք, բակային տարածք և ստորգետնյա ավտոկայանատեղիներ ավտոմեքենաների մոտեցումները նախատեսված են եղել բացառապես Թերլեմեզյան փողոցից: 2018 թվականի հուլիս ամսից սկսած, երբ շենքի հարակից տարածքի բարեկարգման ժամանակ Հասրաթյան փողոցից կառուցապատողի կողմից կազմակերպվել է լրացուցիչ մոտեցում դեպի շենքի սպասարկման տարածք՝ փողոցի բնակիչները պահանջել են փակել Թերլեմեզյան փողոցից առկա ճանապարհի մուտքը: Խնդրի կարգավորման նպատակով Թերլեմեզյան փողոցից դեպի նորակառույց բազմաբնակարան շենքի տարածք ավտոմեքենաների հոսքը կրճատելու նպատակով Երևանի քաղաքապետարանը 24.09.2018թ. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն հասցեագրված գրությամբ խնդրել էր ուսումնասիրել շենքի ստորգետնյա ավտոկայանատեղիների մոտեցման համար Հասրաթյան փողոցից որպես լրացուցիչ մուտք կազմակերպելու հարցը: ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 19.12.2018թ. հ.17-3-515820 պատասխան գրությամբ Հասրաթյան փողոցի կողմից մուտքի կազմակերպումը համարվել էր ընդունելի, միևնույն ժամանակ առաջարկվել էր փակել Թերլեմեզյան փողոցի մուտքը: Հաշվի առնելով, որ ճանապարհի փակման համար անհրաժեշտ է քննարկվող շենքի համար համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծում կատարել փոփոխություն, ինչը հնարավոր չէ իրականացնել առանց կառուցապատողի հայտի ներկայացման, խնդրի կարգավորման նպատակով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածի հիմքով Թերլեմեզյան փողոցի բնակիչների և կառուցապատող ընկերության տնօրինությանը, քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների մասնակցությամբ իրականացվում են վարչական վարույթի լսումներ: Հերթական լսումները կայանալու է սույն թվականի ապրիլի 25-ին ժամը 15.30-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ